ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՏԻԿՅԱՆ

«Հայ վշտի ու պայքարի երգիչ» էին անվանում ի վերուստ գրողի առաքելություն ստացած Ա. Ահարոնյանին, որը հայրենիքի պահանջով դարձավ հարազատ ժողովրդի շահերի պաշտպանը:

Հասարակական-քաղաքական կյանք մտնելով «եռացող կաթսա» հիշեցնող 80-ական թվականներին՝ Իգդիրի ծխական դպրոցի ուսուցիչ Ա. Ահարոնյանը սկսեց թղթակցել «Արձագանք» ու «Մշակ» թերթերին: 1887 թ. ապրիլին «Արձագանքում» տպագրվեց նրա առաջին թղթակցությունը, որը շաղախված էր հայության ճակատագրի նկատմամբ խորը անհանգստությամբ:

1894 թ. «Մշակում» տպագրված «Լուրեր սահմանի այն կողմից» հոդվածում, վերլուծելով ստեղծված իրադրությունը, Ա. Ահարոնյանը հանգում էր այն կարծիքին, որ սուլթանը նախապատրաստվում է Հայկական հարցը յուրովի լուծել, որը ողբերգական ավարտ է ունենալու արևմտահայության համար: 1894–1896 թթ. համիդյան կոտորածներից մազապուրծ հայությունը երկար քարավաններով հասավ Արևելյան Հայաստան, Թիֆլիս: Ա. Ահարոնյանը կազմակերպեց գաղթականությանը նպաստ հասցնող հանձնախումբ: Գաղթականների բերած նոր մտածումները հիմք հանդիսացան «Մշակում» տպագրված արևմտահայերի կյանքին նվիրված պատմվածքների համար, որոնք գրողի հռչակ բերեցին Ա. Ահարոնյանին:

1898 թ. Լոզանում հանդիպելով Ք. Միքայելյանին՝ նրա հորդորով աշխատակցեց «Դրոշակին»: 1898 թ. տպագրվեց Ա. Ահարոնյանի «Խայր» պատմվածքը: Այն ազգային-ազատագրական պայքարի կոչ լինելուց բացի, Խայի բերանով, օձի և արագիլի պայքարի դրվագով, հայությանը նպատակամղում էր զինված պայքարի գաղափարին, փորձում արևմտահայության ստվար զանգվածների մտայնությունից դուրս բերել ի վերուստ տրված ճակատագիր հասկացությունը, համոզելով, որ յուրաքանչյուր անհատի ճակատագիրը գտնվում է իր ձեռքում և անհրաժեշտ է պայքարել, ջանալ, որպեսզի նրա տնօրինությունը չընկնի ուրիշի ձեռքը: Այնուհետև «Ղարիբ» ստորագրությամբ տպագրվեցին պատմվածքները, որոնք հետագայում ամփոփվեցին «Ազատության ճանապարհին» խորագրով 1896 թ. լույս տեսած ժողովածուում:

1907 թ. սկսվում է Ա. Ահարոնյանի դիվանագիտական գործունեությունը: Խրիմյան Հայրիկի հանձնարարությամբ նա ընդգրկվում է Հոլանդիայի Լա Հեյ քաղաք մեկնող պատվիրակության մեջ, որը մտադրություն ուներ այնտեղ գումարվելիք խաղաղության համաժողովին ներկայացնել Հայկական հարցը և ա-

զատագրության խնդրում օժանդակություն ստանալ: Պատվիրակությունը, ցավոք, հաջողության չհասավ:

Ականատեսն ու մասնակիցը լինելով ցարիզմի ու սուլթանիզմի հակահայկական քաղաքականությանը և նրանց դեմ իրականացվող միջոցառումներին, Ա. Ահարոնյանի համար գաղտնիք չի մնում, որ երկու բռնակալներն էլ միասնաբար ձգտում են ասպարեզից հանել այնքան անհանգստություն պատճառող Հայկական հարցը: Անհրաժեշտություն էր դառնում գաղափարական պայքարը, որպեսզի ստրկության ծանր բեռին ընտելացած հայությունը արթնացներ իր մեջ քնած ազատության բնազդը և դուրս գար պայքարի: Առաջին աշխարհամարտը, կամավորական շարժումը, Մեծ եղեռնը, ռուսական երկու հեղափոխություններն առավել ծանր կացություն ստեղծեցին ողջ հայության համար: Բոլշևիկյան վարչակարգը Բրեստում թուրքական բռնատիրությանը նվիրելով հայության պատմական հայրենիքը՝ երաշխիքներ տվեց թուրքական վանդալիզմին, որպեսզի այժմ էլ օրվա խնդիր դարձնի արևելահայության ոչնչացման ծրագիրը և դրանով իսկ ամբողջովին լուծի Հայկական հարցը:

1918 թ. փետրվարին «Հորիզոն» թերթում տպագրվեց Ա. Ահարոնյանի «Ահազանգ» հոդված-կոչը: Այն ամպրոպի դեր խաղաց: «Հաննիբալը մեր դրանն է,– -գուժում էր Ա. Ահարոնյանը և շարունակում,– ես կուզեի որ խոսքս վիթխարի ահազանգի պես հնչվեր և գոռ արձագանքներով գնար բախելու հիմարության և փարթամ բթամտության երկաթե դռները, որոնց հետևում մրափում են զգաստությունից թափուր խիղճերն ու հոգիները»[1]: Պայքարելով «խեղդող խավարի» դեմ՝ Ա. Ահարոնյանը ցանկանում էր վերածվել «շղթայազերծ» մրրիկի, որպեսզի զարկվեր «անհույզ ու եղկելի գոյությունների կարծր ճակատներին», որպեսզի արթնանար վտանգի զգացողությունը, և հայությունը դուրս գար ճակատագրական մարտի: «Խորհելու, չափելու, կշռելու ժամանակ չկա… Մեր հայրենի լեռնալանջերից ծփծփան ու պղտոր հեղեղն է իջնում մռնչալով», անհրաժեշտ է ոտքի ելնել, դեն շպրտել պատրանքներն ու հույսերը, այդ՝ «անձնական հոգու ու վայելքի, պերճության ու պչրանքի, զեխության ու զազիր տարփանքի այս ախտավոր ծովը, որի մեջ օրորվում են բիրտ ու գոսացած հոգիները»[2]:

«Հատուցման ժամն է հասել»,– ահազանգում էր գրողը և զենքի կոչում բոլոր դասալիքներին, Հայրենիքի նկատմամբ «զգացմունքների ամլություն» ունեցողներին: Վերջիններիս անվանելով ոճիրի հետ համբուրվողներ՝ Ա. Ահարոնյանը հիշեցնում էր, որ «Հազար-հազար մութ ձեռներ կան, որոնք քո Գողգոթայի վրա եռանդով վիհ են փորում ու վախճանական նահատակության խաչը տնկելու… ոչ, Խաչը չպիտի տնկվի, և քո Գողգոթան քո ռազմիկ զավակների ոտքերի տակ պիտի տնքա»[3]: Եվ հայ ժողովուրդն արթնացավ քնից և, Արամների, Բեկ Փիրումյանների, Դրոների, Նժդեհների գլխավորությամբ, ոչնչացրեց դարավոր թշնամու հայակեր ծրագիրը, ձեռք բերեց դարեր առաջ կորցրած անկախությունը, կերտվեց Հայոց նոր պետականությունը, որը դարձավ երկու իրար հարազատացած,

---

[1] *Ա. Ա հ ա ր ո ն յ ա ն. Ահազանգ, Երևան, 1993, էջ 5:*

[2] *Նույն տեղում, էջ 5–6*

[3] *Նույն տեղում, էջ 9:*

իրար ոչնչացնող գաղափարախոսությունների հարձակման նշանակետ: «Ռուսական առեղծվածը» հոդվածում խորը վերլուծելով Հայկական հարցում բոլշևիկների ու քեմալականության նկրտումները, «կարմիր ու թանձր մառախուղով» «Ռուսիո հորիզոնը» պատած մղձավանջը, «ռուսական կարմիր ուրագանի» նկատմամբ հիացմունք արտահայտող «Օսմանի հորդաները» ՝ նրա մեջ են տեսնում իրենց ՝ հայությունը խժռելու ծրագրի բարեհաջող ընթացքը[4]: «…Մի ժողովուրդ, որ անմասն է մնացել Սոկրատից մինչև Կանտ ձգվող մարդկային մտքի ոսկե շղթային» և յուրացնում է միմիայն ոչնչացնելու ու ավերելու «տեխնիկ միջոցները», «դառնում է արհավիրք պատմության» համար ՝ «հին ՝ թե նոր, Իտտիհատական ՝ թե քեմալական, Խալիֆայական ՝ թե հանրապետական»[5]: Եվ այդ հորդաներին «կարմիր Մոսկվան է զինում», «հրահրում ամենամութ, ամենաավերիչ բնազդները» և «խավար ցեղերին ոտքի հանում արևմտյան քաղաքակրթության դեմ հանուն… համայնավարության, հանուն պրոլետարիատի…»[6]: Ու, քանի որ, բոլշևիզմն ու քեմալականությունը չարության տիրոջ կուտակողներն են, պիտի անհետանան, ոչնչանան, որպեսզի մարդկությունը փրկվի հոգևոր ու բարոյական կողոպտումից ՝ «Բոլշևիզմը պիտի ընկնի ու անհետանա նաև, որպես հակասությունների, կեղծիքի, ստի, մաքիավելիզմի մի այլանդակ սիստեմ»[7]:

Եվ այդ ՝ մարդկության սև օրերը ետ բերած վարչակարգը, զինելով թրքության ավերիչ բազուկը, այն ուղղում է հայության դեմ: Վանդալները, որ այժմ հորջորջվում են հեղափոխականներ, դավանում են քեմալականությանը, ուսմունք, որը «մեր օրերի ներոնիզմը» լինելով, «ժամանակակից մարդկության խղճմտանքի, քաղաքակրթության և միջազգային մորալի դեմ ցցված ամենեն արտառոց և ամենեն նախատական փաստն է, որ երբևիցե տիեզերական պատմությունն արձանագրել է»[8]:

Բոլշևիզմը համեմատելով քեմալականության հետ ՝ Ա. Ահարոնյանը գտնում է, որ երկուսի ակունքն էլ Առաջին աշխարհամարտն էր, երկուսն էլ «արկածախնդիր ու անգութ» են և այդ «պատճառով կարողացել են կորաքամակ ու մութ ամբոխների թիկունքին նստել և ամենախավար դարերի հրեշավոր բռնությունները կիրառել…»[9]: Եվ քեմալիզմը ՝ «ինքնաբավ ու հտպիտ…այլանդակությունը», ոչ միայն պայքարում է եվրոպական քաղաքակրթության, այլ բուն եվրոպական «ազգերի դեմ»[10]: Այս ճշմարտության գիտակցումն էր, որ Վ. Հյուգոյին ստիպեց գրելու.

«Ամեն կողմ ավեր ու սուգ.
թյուրքերն են անցել այստեղից»[11]:

---

[4] *Նույն տեղում, էջ 12–13:*
[5] *Նույն տեղում, էջ 13:*
[6] *Նույն տեղում, էջ 14:*
[7] *Նույն տեղում, էջ 42:*
[8] *Նույն տեղում, էջ 44:*
[9] *Նույն տեղում:*
[10] *Նույն տեղում, էջ 46:*
[11] *Նույն տեղում, էջ 51:*

Քեմալականությունը, յուրացնելով Հայկական հարցում սուլթանի և երիտթուրքերի գաղափարները, դրանք շաղախելով մարդատյացության նոր որակներով, խաբելով ոչ միայն իրենց հարազատ տեսությունը դավանող բոլշևիկներին, այլև Եվրոպային, սրի ու կոտորածների նոր ձևերով են ուզում լուծել Հայկական հարցը: Ի՞նչ կարելի էր սպասել քեմալականության հորից, երիտթուրքերից, երբ նրանք, անցնելով իշխանության գլուխ, վտարանդու կարգավիճակ բաշխեցին իրենց գաղափարական առաջնորդ Ահմեդ Ռիզային: Հանդիպելով նրա հետ Փարիզում 1908 թ.՝ Ա. Ահարոնյանը մի պահ ոգևորվում է 1908 թ. սահմանադրության առթիվ, սակայն խորհրդի է գնում ֆրանսիացի ծանոթ արևելագետի մոտ, որը, լսելով լուրը, հայտարարում է. «Ոչ, Արևելյան Հարցը թյուրք Սահմանադրությամբ լուծված չէ և ոչ Հայկականը: Սա միայն կ՚արագացնի օսմանյան կայսրության քայքայման պրոցեսը. տասն տարի չանցած, Թյուրքիան բաժան-բաժան կը լինի»[12]:

Ա. Ռիզային Ա. Ահարոնյանը նորից հանդիպեց 1919 թ. Կ. Պոլսում, երբ գնացել էր բանակցելու թուրքական կառավարության հետ: Հայատյացների գաղափարական առաջնորդն առաջին թուրքն էր, որ Մեծ եղեռնի հարցում ընդունելով ճշմարտությունը, «արյունարբու մարդասպաններ» անվանեց իր աշակերտներին, բողոքեց այդ անօրինակ ոճիրի դեմ[13]: Սակայն այդ ամենն ազդեցություն չէին կարող ունենալ «Անապատներից եկած՝ և անապատը իր հոգում» պահպանած թուրքի համար, մի ազգ, որն այդպես էլ չկարողացավ հարմարվել այն միջավայրին, որտեղ «աշխարհի ամենափայլուն և ամենավճիտ քաղաքակրթությունն է ծաղկել[14]:

Մեջբերելով Ա. Մանդելշտամի՝ «միջազգային իրավունքի քաջահմուտ ու արդարամիտ» մասնագետի՝ թուրքերի բարբարոսության հակումների, «արյան ու արցունքի հեղեղներ» «ստեղծագործելու» ունակությունների մասին մտքերը՝ դժբախտ է համարում թուրք ժողովրդին, որովհետև նրա առաջնորդները միշտ կրոնական մոլեռանդություն ներարկելով թուրքին, նրան հեռացրել են քաղաքակրթվելու հնարավորությունից, անգամ կրոնը, որ ընդօրինակվել է արաբներից՝ նրա ոգուն «իսպառ օտար է», այդ պատճառով էլ աշխարհի եզակի ժողովուրդներից մեկն է, որ «չի կարողացել ազգային եկեղեցի ստեղծել» անգամ[15]:

Տրապիզոնում Իտալիայի հյուպատոսը, որ ականատես է եղել թուրք մարդակերների խժդժություններին, կոտորածի սահմռկեցուցիչ տեսարաններին, ինքն իրեն հարց է տալիս ու պատասխանում, որ «բնության բոլոր գազանները թյուրք կառավարության անդամներ» են, որ իր տեսածները բավարար հիմքեր են տալիս կոչ անելու բոլոր քրիստոնյա պետություններին միանալու և թուրքերին նզովելու[16]:

---

[12] *Նույն տեղում, էջ 55:*
[13] *Նույն տեղում, էջ 56:*
[14] *Նույն տեղում, էջ 57:*
[15] *Նույն տեղում, էջ 58-59:*
[16] *Նույն տեղում, էջ 61:*

Հայոց Մեծ եղեռնն անվանելով «Արևելքում քաղաքակրթության մահ»՝ «Դաշնակիցները…Հայաստանը զոհեցին քեմալիզմին. և հավատն սպանեցին աշխարհում»: Ա. Ահարոնյանը լավատես է և իր ժողովրդին հուսադրում է. «Անհնար է խողխողված արդարության վրա բախտ կառուցանել: Այստեղ է Հայաստանի զորությունը, այստեղ է և քեմալիզմի կործանումը»[17]:

Ողբալով հարազատ ժողովրդի մի հատվածի կորուստը՝ Ա. Ահարոնյանը «Հարգանք քեզ» հոդվածում քննում է ճակատագրական հարվածների ակունքները և հարց տալիս. «Ո՞վ չափեց երբևիցե քո տառապանքի անդունդները, ո՞ր սգավոր կարապը եկավ մի օր հուզելու հոգուդ խորունկ ցավի խորունկ լճերը, ուր լողում են պղտոր ալիքները անեծքի մրմունջով: Ինքդ միայն անօրինակ ցավիդ մեծությունը…»[18]: Հոդվածը, Հայոց դարավոր պատմության քննությունը լինելով, խորունկ միտք է արտահայտում. ժողովուրդն ինքն է իր ազատության կերտողը: Հարյուրավոր փորձություններ անցած, թիկունքին կրելով ծանր բեռը, հայությունն աննահանջ գնում է դեպի «սքանչելի նպատակ»: Տոկուն հայ ոգին, որ կրել է բազում տառապանքներ, վիրավոր ու խոշտանգված առաջ է գնում, առաջ, երբ այդ զրկանքները կրել չկարողացած շատ «ազգեր լացով խորտակվել են ու կորել, որպես մրրիկների վարած փոշու ամպեր…»[19]:

Ժամանակները փոխվում են, սակայն հայոց նկատմամբ պատմությունը կրկնվում է, «տանջված ճամփորդը» շարունակում է իր երթը, ձգտում սեփական ուժերով լուծել իր գերխնդիրը, բայց՝ «Հազար ձեռներ կան հոգուդ հսկա թռիչքը սանձելու, հազար ճիրաններ՝ ազատության քո վարդագույն երազները բզկտելու»[20]: Եվ այդքանից հետո, զարմանալի է, անհավատալի, որ միայնակ պայքարելով ոսոխների դեմ, հայությունը երբեք, կարծես, չի ընկճվում և նպատակամղված գնում է դեպի իր Հարցի լուծումը՝ «Ասա՛, կենդանի մարտիրոս, ո՞վ դրեց քո հոգում այդ զարմանալի բոցը… ո՞վ տնկեց քո կրծքի տակ խորունկ հավատքի այդ հսկա ծառը, որի վրա այնքան սգավոր թռչուններ են թառել: Թե նա մի բարի աստված էր, ինչու՞ կապեց քո սրունքներին ոռնացող ցեղերը, կիզիչ անապատների խուժանը…»[21]:

Համիդյան, երիտթուրքական կոտորածներ, ցարիզմի մեղսակցություն, եվրոպական քարսրտություն տեսած ժողովուրդն ուրիշ ելք չունի, բացի զինված պայքարից, զենքի միջոցով Հայկական հարցը լուծելուց: Գրողը հենց դրան էլ մղում է հայությանը. «…վեր կա՛ց ու զա՛րկ, զա՛րկ ուժգին և թող հազար տարիների մեռելների ոսկորները դողան հարվածներիդ շանթից: Զա՛րկ, երբ հալածում են քեզ, զա՛րկ, երբ փակում են քո փառավոր ընթացքը, զա՛րկ, երբ մերժում ու հեգնում են քո պարզած ձեռքը, զարկ շարունակ, մինչև կարմիր ոճիրի նողկալի քրքիջը խեղդվի, մինչև արդարության ու ճշմարտության վսեմ գործը հաղթանակի: Եվ

---

[17] *Նույն տեղում, էջ 73, 77, 78, 81:*

[18] *Ա. Ա հ ա ր ո ն յ ա ն. Ազատության ճանապարհին, Վենետիկ, 1896, էջ 93:*

[19] *Նույն տեղում:*

[20] *Նույն տեղում, էջ 94:*

[21] *Նույն տեղում, էջ 95-96:*

այն ժամանակ հավատա՛, նահատակ ժողովուրդ, արյունարբու թշնամիդ անգամ ծունկ կը չոքե ու կը կոչի՝ «հարգա՛նք քեզ»...»[22]:

Գրեթե նույն ոգով է գրված Ա. Ահարոնյանի «Հրաշք կա» հոդվածը, որ 1918 թ. մայիսին տպագրվեց «Հորիզոն» թերթում: Նկարագրելով երիտթուրքերի մեծ ոճրագործությունը, հարց տալով, թե ինչ եղան Մուշի, Կարինի, Բիթլիսի, Երզնկայի հարյուրհազարավոր հայերը, բազմամարդ հայ տները, սքանչելի հայ շենները՝ հրապարակախոսը, սակայն, չի ընկճվում և, հայությանը պայքարի կոչելով, հաղթանակի շնորհիվ է ցանկանում պատմության դատաստանին ստիպել հաշվեհարդար տեսնել այն ճիվաղների հետ, ովքեր բռնանում էին ժողովրդի ազատությանը, խեղդում նրա արդար Հարցի լուծման ճիչերը: Բայց ելք կա. «Գիտեմ՝ հուսախաբներ եք դուք բոլորդ, պարտվածները՝ անհավասար պայքարի մեջ. գիտեմ, բոլոր պարտվածները վաղուց են մեռել, բոլոր տաճարները վաղուց են ավեր. փակ է իմ դուռը, փակ է և իմ լուսամուտը՝ ձեզ համար հոգուս դռներն են լայն բացված և նրա մեջ մի հին հավատ, որ տարիներից ի վեր հեծեծում է, հեծեծում... ու դեռ չի մեռել:

«Հրաշք կա տակավին... *(ընդգծ. մերն է – Հ. Զ.)»*[23]:

Եվ այդ ՀՐԱՇՔԸ կատարվեց: 1918 թ. մայիսյան հերոսամարտերը ստիպեցին անարգ ու դարավոր թշնամուն հրաժարվել հայությանը իսպառ ոչնչացնելու, Հայկական հարցը թաղելու իր հրեշավոր ծրագրից: Կերտվեց Հայոց ԱՆԿԱԽ ՈՒ ԱՋԱՏ Հայրենիքը, վերականգնվեց Հայոց պետականությունը:

1918 թ. Ա. Ահարոնյանին բաժին հասավ առավել ծանր ու հոգեմաշ պարտականություն՝ Հայոց նորանկախ պետականության շահերի պաշտպանությունը, Հայկական հարցը ցանկալի հանգրվան հասցնելու նվիրական առաջադրանքը: Նա էր նույն թվականի հունիսին թուրքերի հետ անհավասար, անարդարացի պայմանագիր ստորագրողը, նա էր, որ թեկուզ այդ նվաստալից պահերին, սրտի անհուն բերկրանք էր ապրելու, երբ քարտեզի վրա գծագրվում էին փոքրիկ, շատ փոքրիկ Հայրենիքի սահմանները:

1919 թ. հունվարին, որպես Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար, Ա. Ահարոնյանը մեկնեց Փարիզ, որպեսզի այնտեղ Խաղաղության վեհաժողովում պաշտպանի Հայկական հարցը, որպեսզի հնարավոր լինի քոչվորական լավայի տակից դուրս բերել հայության պատմական Հայրենիքի գոնե մի մասը: Հույսեր էին սրանք, որոնք իրականության վերածելու համար Ա. Ահարոնյանը բազում հանդիպումներ ունեցավ տերությունների պատասխանատուների հետ, հուսալքվեց ու ոգևորվեց, երազեց ու տառապեց, բայց և չհամարձակվեց ճշմարտությունը պատմել իր ժողովրդին՝ «Երանի նրանց, որոնք չգիտեն այն, ինչ ես գիտեմ»[24]:

Գաղտնիքները շատ են: Դրանք կարմիր բռնատիրությունը թաքցնում էր հայությունից, բայց մոռանում, որ իրադարձությունների վկա Ա. Ահարոնյանը, որպես պատգամ, իր ժողովրդին է թողնելու պատմական ճշմարտությունը, որի

---

[22] *Նույն տեղում, էջ 96-97:*

[23] *Ա. Ահարոնյան, Երևան, 1990, էջ 35:*

[24] *Ա. Ա հ ա ր ո ն յ ա ն. Ահազանգ, էջ 5:*

խտացումն էր 1934-ին Բոստոնում լույս տեսած «Սարդարապատից մինչև Սևր և Լոզան» գիրքը՝ Հայկական հարցի 1919-1927 թթ. տարեգրությունը:

1919 թ. Փարիզում հանդիպելով տերությունների ներկայացուցիչների հետ՝ Ա. Ահարոնյանը եկավ այն համոզմանը, որ հուսալ, թե լուծում է ստանալու Հայկական հարցը, դեռևս վաղ է: Ելնելով այդ դրույթից, նա ջանաց, որպեսզի Հանրապետությունը գոնե տնտեսական ու ռազմական օգնություն ստանա: Այստեղ ևս տերությունների ներկայացուցիչները բացի խոստումներից որևէ քայլ չձեռնարկեցին: Համագործակցելով Պողոս Նուբար փաշայի հետ՝ Ա. Ահարոնյանը ամերիկյան ներկայացուցիչների հետ հանդիպումից հետո համոզվեց, որ Հայաստանը զինական աջակցություն կարող է ակնկալել Անգլիայից, ինչին դեմ չի լինի ԱՄՆ-ը: Բայց վերջինս էլ, համաձայն ամերիկացիների հայտարարության, չի փորձում գրավել Արևմտյան Հայաստանը, որովհետև վախենում է ֆրանսիական մրցակցությունից:

Ուշադրություն չդարձնելով Հանրապետության, հայ ժողովրդի ծանր կացությանը, դաշնակից անվանյալները հետապնդում էին քաղաքական նպատակներ, ի հայտ բերում իրենց հակասությունները: Առավել հուսահատական էր Անգլիայի Արևելյան գործերի գլխավոր վարիչ Լ. Մալետի հետ հանդիպումը. «…մենք զինվոր չունենք»,– հայտարարեց անգլիացին: Որպես պատասխան հնչեց Ա. Ահարոնյանի մեղադրականը. «Մենք չորս տարի ամեն զոհողություն տարանք, սպասելով Դաշնակիցներին, որպես գերագույն փրկություն: Դուք եկաք ահա, և մենք դարձյալ կոտորվում ենք: Ես կարծում եմ, մեր ժողովուրդը դժվար կկարողանա բացատրել և այս անիրավությունը…»[25]: 1919 թ. ապրիլի 17-ին ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնն ընդունեց հայկական երկու պատվիրակությունների ղեկավարներին և Հայաստանի հովանավորության (մանդատ) մասին արտահայտեց իր կարծիքը. «Ես էլ ցանկանում եմ, որ Հայաստանի մանդատն Ամերիկան ընդունի: Կարող եմ վստահեցնել Ձեզ, որ Ամերիկայի բոլոր լավագույն քաղաքացիների մտածումն ու զգացումն էլ այդ է: Եվ եթե երբևիցե Ամերիկան որևէ մանդատ հանձն առնի, այդ կլինի Հայաստանինը»[26]:

Փարիզի խաղաղության խորհրդաժողովից հետո, հաշտության պայմանագրի նախապատրաստական աշխատանքներով զբաղվեց իտալական Սան Ռեմո քաղաքում գումարված խորհրդաժողովը (1920 թ. ապրիլ): Քննարկելով Հայկական հարցը՝ մասնակից տերությունները՝ Ֆրանսիան, Անգլիան, Իտալիան, թեև ընդունում էին հայկական միացյալ պետություն ստեղծելու գաղափարը, սակայն չէին կողմնորոշվում նրա սահմանների ու պաշտպանության խնդիրներում, ուստի որոշեցին այդ և հարակից հարցերը լուծելու նպատակով Հայաստանի հովանավորությունը հանձնել ԱՄՆ-ին, որի նախագահի վրա էր դրվում նաև Հայաստանի սահմանների որոշման պարտականություն-լիազորությունը: Կազմված զեկուցագրի համաձայն, հովանավորությունը իրականացնելու համար պահանջվում էր 757 միլիոն դոլար: Զեկուցագրի կրճատ տարբերակը հիմք ընդունե-

[25] *Նույն տեղում, էջ 19:*
[26] *Նույն տեղում, էջ 23-24:*

լով՝ ԱՄՆ Սենատը 1920 թ. ապրիլի 24-ին փաստացի ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը: Սենատի նման դիրքորոշումը հույսեր էր ներշնչում, որ կընդունվի նաև Հայաստանի հովանավորության հարցը: Սակայն 1920 թ. հունիսի 1-ին Սենատը 23 կողմ, 52 դեմ ձայների հարաբերությամբ մերժեց հովանավորությունը:

Մինչ այդ հուսախաբող իրադարձությունը, Փարիզում զգալով Անգլիայի բարձրաստիճան ղեկավարության հետ հանդիպման անհրաժեշտությունը, Ա. Ահարոնյանը մեկնեց Լոնդոն և 1920 թ. հունվարի 8-ին հանդիպեց ռազմական նախարար Ու. Չերչիլի հետ, որպեսզի նա աջակցի Հայաստանում 40 000-ոց բանակ կազմավորելու խնդրին: Ներկայացնելով թուրք-թաթարա-բոլշևիկյան հարձակման վտանգը՝ Ա. Ահարոնյանն ասում է. «Նկատելով այս բոլոր պայմանները՝ ես շատ եմ խնդրում, որ վերջապես հնար տրվի մեզ վերակազմելու մեր բանակը, հասցնելով այն մինչև քառասուն հազարի: Նման մի ուժ միայն կարող է ազատել հայ ժողովուրդը անխուսափելի աղետից»[27]:

«Ես ըմբռնում եմ դրության լրջությունը: Ցավում եմ, որ ես մենակ իրավասու չեմ Ձեզ գոհացում տալու… Գալով ձեր խնդրին, հավատացեք, որ ծանոթ եմ ձեր գոհաբերություններին և սրտանց համակիր եմ ձեզ: Իսկույն ներկայացրեք ինձ մի նոթ՝ ձեր պետքերի մասին: Ես երկու օրում կուսումնասիրեմ ձեր պահանջները և իսկույն կներկայացնեմ մեր կառավարությանը: Խոստանում եմ լինել ձեր համար լավ կանալ… Եվ խնդրեմ, հավատացեք իմ խոր համակրանքին դեպի հայ ժողովուրդը»[28]:

Այնուհետև հայկական պատվիրակությունները Լոնդոնում հոգեմաշ հանդիպումներ ու տեսակցություններ ունեցան բազմաթիվ գործիչների հետ, մասնակցեցին սահմաններ վճռող հանձնաժողովի նիստերին, պայքար մղեցին օրածին փոփոխությունների դեմ: Այս ամենի նկարագրությունն էր Գևորգ Ե Կաթողիկոսին ուղղված նամակը. «…Տարաբախտաբար, շահագրգռված մեծ պետությունների մրցակցությունը և առհասարակ մեր խնդրի բարդությունը պատճառ դարձան, որ մեր հարցի կարգադրությունը այսքան ուշացավ, ինչ որ ցավ է ինձ ասել, աղետավոր եղավ Հայոց երկրի բոլոր մասերում… Հայաստանի վրա Ամերիկան մանդատ ունենալու այնքան հաստատուն համարված հույսը տարաբախտաբար ի դերև եղավ»: Սկսված նոր տարաձայնություններն ու Թուրքիան բաժան-բաժան անելու խնդրում տերությունների հակասությունները ստիպեցին հայկական պատվիրակություններին փոխել ներկայացված պահանջները՝ «…ստիպված եղանք… հրաժարվել Կիլիկիայից: Մեր նոր ձևակերպման պահանջները ամփոփվեցին հետևյալ կետերում. առաջին՝ ինչպես միշտ քաղաքական միացումն Կովկասյան և Թուրքաց Հայաստանի մեկ հայկական պետության ձուլում. երկրորդ՝ Թուրքաց Հայաստանից Վանի վիլայեթն առանց Հեքիարի սանջակի, Բիթլիսի վիլայեթ, առանց Սղերդի, Էրզրումի ամբողջ վիլայեթը, Խարբերդի հա-

[27] *Նույն տեղում, էջ 51*
[28] *Նույն տեղում, էջ 51-52:*

յաբնակ շրջանը քաղաքով միասին, ինչպես և Դերսիմը, որպես աշխարհագրական միություն և վերջապես լայն ելք դեպի Սև ծովը»[29]:

Ընդունել տալ այդ պահանջները այնքան էլ դյուրին գործ չէր, թեև Հայկական հարցի լուծմանը նպատակամղված որոշ գործիչներ համաձայն էին Ա. Ահարոնյանի ու Պողոս Նուբարի տեսակետներին: Լոնդոնի խորհրդաժողովում, երբ նորից քննարկվում էր Հայկական հարցը, սահմանների խնդիրը, հայկական պատվիրակությունը հանդիպեց սահմանների որոշման դժվարությունների: Ավարտվեցին վերջնական պայմանագիր կնքելու նախապատրաստական աշխատանքները, որոնք այնքան էլ հուսադրող չէին, բայց կաթողիկոսին ուղղված վերոհիշյալ նամակում Ա. Ահարոնյանը գրում էր. «Երջանիկ եմ հայտնել Ձերդ Սրբության, որ միացյալ Հայաստանի անկախության պաշտոնական հռչակումն այլևս - հապաղելու չէ և հազիվ թե շաբաթների գործ է: Որպես գերագույն շնորհ, պիտի խնդրեմ Ձերդ Սրբությանը և դարերից ի վեր արցունքով ցողված այդ նվիրական մեծ օրվա լուրը, երբ Վեհափառությանդ հաղորդելու գերագույն երջանկություն ունենամ, հաճեք հրամայել, որ Հայոց Աշխարհի բոլոր տաճարների զանգակները հնչեցնեն, որպես մեծ օրվա նվիրական ավետիսը արդարաբար արձագանքներով ի սփյուռս աշխարհի ցրված հայության՝ Ձեր վտարանդի և տառապած զավակների ականջներին հասնի»[30]:

1920 թ. օգոստոսի 10-ին, ժամը 16-ին, ստորագրվեց Սևրի դաշնագիրը: «Կյանքիս երջանիկ օրն է այս: Երեսուն տարվա պայքարս, բողոքս, տառապանքս ու հույսերս պսակվեցին փառավոր հաջողությամբ: Թյուրքական դաշնագիրն ստորագրվեց և բոլոր Դաշնակից պետությունների Համաժողովն այսպիսով հռչակեց Միացյալ, Անկախ, Ազատ Հայաստանը Սևրի սրահում»[31],– գրում էր Ա. Ահարոնյանը:

Հետագա իրադարձությունները, սակայն, ապացուցեցին, թե ինչքանով էին տերությունները շահագրգիռ Հայկական հարցում: Իսկ երբ այդ տառապալից խնդիրն արժանացավ թուրք-բոլշևիկյան քննարկմանը, դաշնակից անվանյալները հեռացան իրենց իսկ մարդասիրական անվանվող դիրքերից: Ինչպես այդ քաղաքականությունը բնութագրում է Անգլիայի Արևելյան գործերի դիրեկտոր Օսբորնը, «Կովկասա-Հայաստանը բոլշևիկ է այժմ: Թյուրքական հողերը նրան կցելով՝ մենք զորացրած կլինենք ռուսներին»[32]:

Խորհրդաժողովի մասնակիցների, Քեմալի դավերին ավելացավ ևս մեկ արյունոտ դրվագ՝ Կիլիկիայի հանձնումը թուրքերին: Ֆրանսիական իշխանությունները այս փաստն արդարացնում են ֆինանսական դժվարություններով: Սակայն Ֆրանսիայի վարչապետ Պ. Բրիանի հետ 1921 թ. դեկտեմբերի 7-ի հանդիպման ժամանակ, Ա. Ահարոնյանը, բացելով բոլոր փակագծերը, իր ժողովրդի անունից հայտարարում է. «Պ. Նախագահ, թույլ տվեք Ձեզ ասել, որ մենք այսօր ձեզ բերում ենք համայն հայ ազգի սուգը և ողբը… Այդ արցունքը ոչ միայն մեր ցեղի

---

[29] *Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 57, ց. 5, գ. 215, թ. 2:*
[30] *Նույն տեղում:*
[31] *Նույն տեղում, թ. 117:*
[32] *Նույն տեղում, թ. 143:*

ճակատագրի համար է, այլ նաև Ֆրանսիայի վարկի՝ Արևելքում կրած այս ծանր հարվածի, այս մեծ նվաստացումի համար»[33]: Եթե 1921 թ. փետրվարի 18-ից, ապրիլի 4-ն ընկած ժամանակահատվածում հույսեր էին փայփայվում, որ դաշնակիցները որևէ քայլ կձեռնարկեն ու, պաշտպանելով Հայաստանի իշխանություններին, կփակեն «կարմիր հրեշի» ճանապարհը դեպի Փոքր Ասիա, ապա տարվելով նոր աշխարհաքաղաքական հակամարտություններով՝ տերությունները ոչ միայն «մոռացան» դաշնակից Հայաստանին, այլև ճանապարհ էին բացում Քեմալի համար, որը երկդիմի խաղ սկսելով բոլշևիկների ու Անտանտի երկրների հետ՝ պայմաններ էր ստեղծում մոռանալ տալու Սևրի պայմանագիրը և նախապատրաստվում էր նոր խորհրդաժողովի, որը, տերությունների լուռ թողտվությամբ, վերածվելու էր պանթուրանիզմի նոր հաղթանակի:

Քեմալ-Լենին-Ստալին եղբայրության արդյունք 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերով բոլշևիկյան Ռուսաստանն իր «համեստ» լուման էր ներդնում թուրքիզմի հաղթանակի գործում՝ ապահովելով համաշխարհային սոցիալիստական հեղափոխության սուտ դերակատար Քեմալի հաղթանակը:

Տառապանքի փորձն ունեցող Ա. Ահարոնյանը գիտակցում էր այս վայրիվերումները, բայց հարազատ ժողովրդի դառը պատմությունը նրան հրամայում էր մեկ անգամ ևս դիմել աշխարհի խղճին, դիմել ոչ թե օգնություն հայցելու նպատակով, այլ հաստատագրելու, որ Հայկական հարցը թաղվեց հենց այն երկրների պայծառ անհեռատեսության շնորհիվ, որով հնարավորություն տրվեց ոչ միայն բոլշևիկյան, այլև քեմալական գաղափարախոսության հիմնավորմանը:

Լոզանի խորհրդաժողովում Թուրքիայի դատապաշտպանի դերը ստանձնած բոլշևիկյան Ռուսաստանը մազաչափ անգամ չէր մտածում բռնագերված Արևմտյան Հայաստանի պաշտպանության մասին, որովհետև գլխավորն արդեն Արևմուտքի նկատմամբ հաղթանակի ապահովումն էր, Թուրքիայի կորզումը:

1922 թ. դեկտեմբերի 26-ին, ելույթ ունենալով Լոզանի խորհրդաժողովի ենթախմբում, Ա. Ահարոնյանը ներկայացնում է մինչև խորհրդաժողով ընկած ժամանակահատվածում Հայկական հարցի նկատմամբ իրականացված անարդարությունները և իբրև հատուցում այդ դաժան հաշվեհարդարի, իբրև հայ ժողովրդի կամքի արտահայտություն, հայտարարում, որ չնայած գործադրված ու գործադրվելիք հակահայկականությանը՝ «…մենք միշտ ճգներ ենք մեր հայրենիքի ազատության, և Միացյալ Հայաստանը պիտի լինի մեր իդեալը»[34]:

Թեև Լոզանի անարդարությունից հետո Առաջին հանրապետության պատվիրակությունը կորցրեց իր իրավասությունները, սակայն, մինչև 1934 թ. փետրվարի 11-ը, «Համազգայինի» Մարսելի մասնաճյուղում վերջին ելույթը, Ա. Ահարոնյանը, որ անցել էր դիվանագիտական փորձությունների միջով, երբեք չընկճվեց, երբեք չկորցրեց հավատը, որ անպայմանորեն լուծում է ստանալու Հայկական հարցը:

---

[33] *Նույն տեղում, թ. 192:*

[34] *Գ. Լ ա զ յ ա ն. Հայաստան և հայ դատը, Երևան, 1991, էջ 303:*

Այս ելույթում, դիմելով համայն հայությանը, Ա. Ահարոնյանն ասում է. «Ժողովուրդ Հայոց, գիտցիր, որ սպասման վիճակ է այս: Հավատա՛, որ պիտի վերադառնաս քո պապերի, արիարանց քաջերի երկիրը: Եկել ենք այստեղ չմնալու համար, եկել ենք վերադառնալու համար... Գիտցիր, հայ ժողովուրդ, որ արժեք ես դու, և խոսք ունիս ասելու այս նամարդ աշխարհին»[35]: Տարիների փորձն էր իրավունք տալիս նման գնահատումներ կատարելու: Դիվանագիտական խարդավանքներն իրենց ամբողջ ծանրությամբ թեև ընկան Հայոց լեռների վրա, սակայն Ա. Ահարոնյան գրողն ու դիվանագետը համոզված էր, որ պատմության սխալներն ուղղելու ելքը կա: Այդ ելքը Հայոց միաբանությունն է, հարատևման դժվարին ճանապարհի հաղթահարումը:

АВЕТИС АГАРОНЯН И АРМЯНСКИЙ ВОПРОС

ОВАНЕС ЗАТИКЯН

Р е з ю м е

Ав. Агаронян еще в 1890-х годах в своих многочисленных статьях показал позицию великих держав по отношению к Армянскому вопросу. Поэтому в начале своей деятельности в Европе он пытался создать общественно-политическое мнение для разрешения Армянского вопроса, однако, став очевидцем трагических событий, пережил идейный поворот, придя к выводу, что в решении Армянского вопроса заинтересован только сам армянский народ. Необходимо было преодолеть различные международные заслоны. Еще не пережив разочарование от невыполнения Севрского договора, армянский народ получил удар от Московского договора 1921 г. Необходимы были стойкость и единодушие, чтобы спасти народ от отчаяния и подготовить будущую победу. Это было целью общественно-политической деятельности Ав. Агароняна и ключом для разрешения армянской национальной проблемы. Связав надежду только с внутренней силой и борьбой армянского народа, Ав. Агаронян верил в будущее.

AVETIS AHARONYAN AND THE ARMENIAN QUESTION

HOVHANNES ZATIKYAN

S u m m a r y

Av. Aharonyan showed the position of the Great Powers in relation to the Armenian question in numerous articles still in the 1890s. Therefore, at the beginning of his political activity in Europe he tried to create a political and social opinion for the solution of the Armenian question, however,

[35] *Ավետիս Ահարոնյան, Բելյրութ, 1989, էջ 48:*

becoming the eyewitness of the tragical events, going through an ideological turn, he came to the conclusion that only the Armenian people were interested in the solution of the Armenian question. It was necessary to surmount the various international barriers. Yet not having gone through disappointment from the default of the Sèvres Treaty, Armenian people received impact from the Moscow Treaty of 1921. Determination and unanimity were necessary to rescue the people from despair and to prepare the future victory. It was the purpose of Av. Aharonyan's political and social activity and a key for the solution of the Armenian national problem. Having connected the hope only with the internal force and struggle of the Armenian people, Av. Aharonyan trusted in the future.